Աշխատանքային իրավունքների ոտնահարում Հետազոտական աշխատանքի արդյունքում մշակված առաջարկություններ

Այս հրապարակումը ստեղծվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը միմիայն հեղինակինն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հետազոտությունը նպատակ է ունեցել բացահայտել և վերլուծել աշխատանքային հարաբերություններում իրավունքների ոտնահարման դեպքերը, դրանց առաջացման պատճառահետևանքային կապը և առաջարկվելու է լուծման ուղիները: Այն իրականացվել է Եվրոպական միության համաֆինանսավորմամբ ՏՀՏ գործատուների միության, Արմավիրի զարգացման կենտրոնի և Կիրակի զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնության» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնի կողմից: Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների կիրառմամբ և անդրադարձել է մասնավորապես *Շիրակի մարզում* աշխատանքային հարաբերություններում իրավունքների ոտնահարման դեպքերին, դրանց առաջացմանը և լուծման ուղիներին:

Փորձագիտական հարցումների եզրահանգումներից ելնելով կատարում ենք **հետևյալ առաջարկությունները.**

1. Հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում և բուհերում մտցնել քաղաքացու աշխատանքային իրավունքների պաշտպանության առարկայի դասավանդում:
2. Կազմակերպել և իրականացնել հեռուստատեսային հաղորդաշարեր իրավունքների պաշտպանությանը նվիրված թեմաներով:
3. Աշխատանքի իրավունքի ոտնահարման դեպքերով դատական մարմինների ծանրաբեռնվախությունը թեթևացնելու համար ստեղծել աշխատանքի իրավունքի ոտնահարման հատուկ մարմին, որը կունենա դատարանին տրված բացառիկ լիազորություն քննելու և լուծելու աշխատանքային վեճեր:
4. Իրականացնել աշխատողներին իրավունքների և պարտականությունների իրազեկման միջոցառումներ
5. Իրականացնել աշխատանքների իրավունքների պաշտպանությանը նվիրված սեմինարներ, դասընթացներ, որոնք պետք է կազմակերպվեն տնտեսավարող հաստատություններում, այդ թվում մասնավոր հատվածում:

6. Իրականացնել պատկան մարմինների կողմից իրավագիտակցության մակարդակին միտված աշխատանքներ:
7. Աշխատանքի իրավունքների պաշտպանության աշխատաներին ակտիվ ներգրավել խնդրով զբաղվող ՀԿ-ին և ԶԼՄ-ով հաղորդաշարեր կազմակերպել այդ թեմայով:
8. Ստեղծել մի նոր մարմին, որտեղ կլուծվեն աշխատանքային վեճերը և իրավունքի խախտման ծայրահեղ դեպքում դիմեն դատարաններ, ինչը էապես կթեթևացնի դատական գործերի ծանրաբեռնվածությունը:
9. ՏԻՄ մարմինները ստեղծեն բաժին կամ ենթաբաժին, իրենց ենթակայության տակ գտնվող հաստատություններում աշխատանքային վեճերը կարգավորելու և աշխատողների իրավունքը պաշտպանելու:
10. Արհմիություններին օրենքով սահմանված կարգով տալ մեծ լիազորություններ , որպեսզի թույլ չտան ոտնահարելու աշխատողների իրավունքները:
11. Աշխատանքային իրավունքները չոտնահարելու համար ստեղծեն հաշտարար դատարաններ:
12. Աշխատանքային իրավունքների ոտնահարման դեմ պետական քաղաքականություն իրականացնել: